ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 01 » հունիս 2021թ. N 69 Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի, 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին մասի 3-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 6-րդ կետը և «ՀՀ Վայոց ձորի մարզի Սարավան գյուղի հիմնական հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ 2021թ. մայիսի 20-ի թիվ 15 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշման հավելվածով հաստատված «ՀՀ Վայոց ձորի մարզի Սարավան գյուղի հիմնական հանրակրթական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության «Ընդհանուր դրույթներ» բաժնի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Ջառիթափ համայնք, Սարավան բնակավայր, 3-րդ փողոց, շենք 23:»:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը:

3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Սարավան գյուղի հիմնական հանրակրթական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության տնօրեն Ա. Փանդունցին՝ կանոնադրության փոփոխությունը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը:

6/2/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ